## Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ

Հիմնադրվել է 1941թ.: Նրա առաջին ղեկավարն էր հայ մեծանուն երաժիշտ Կ.Սարաջյանը: Տարբեր տարիներին նվագախումբը գլխավորել են Մ. Մալունցյանը, Օ.Դուրյանը, Մ. Տերյանը, Ռ.Վարդանյանը, Ա. Քաթանյանը, Դ. Խանջյանը, Վ. Գերգիևը,Վ.Պապյանը, Մ.Ավետիսյանը և Լ. Ճգնավորյանը: 2000 թվականի հոկտեմբերից ՀՊՖՆ-ի գեղարվեստական ղեկավարը և գլխավոր դիրիժորն է Էդուարդ Թոփչյանը:
Նվագախումբը դարձել է արևմտաեվրոպական, ռուսական և հայ երաժշտության սիմֆոնիկ գործերի տարածողը: Այս կոլեկտիվի հետ ելույթ են ունեցել Դավիթ Օյստրախը, Սվյատոսլավ Ռիխտերը, Մստիսլավ Ռոստրոպովիչը և մեծանուն այլ արտիստներ: Նվագախմբի ելույթները ղեկավարել են Ալեքսանդր Մելիք-Փաշաևը, Վիլլի Ֆեռերոն, Ֆրանց Կոնվիչնին, Կուրտ Մազուրը և այլ հայտնի դիրիժորներ: Հեղինակային համերգներով հանդես են եկել Ա.Խաչատրյանը, Դ. Կաբալևսկին և այլ կոմպոզիտորներ: Սկսած 1989-ից նվագախումբը համերգներով հանդես է եկել ԱՄՆ-ում,Կանադայում, Ավստրիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Անգլիայում, Իրանում, ԱՄԷ-ում և այլ երկրներում: Թողարկվել են նվագախմբի կատարումով ավելի քան 30 ձայներիզներ: 2000-2001թթ. համերգաշրջանում ՀՊՖՆ-ն Է.Թոփչյանի ղեկավարությամբ հաջողությամբ հանդես է եկել Մոսկվայում և Բեռլինում:
2003-ի հունվարին ՀՊՖՆ-ն մասնակցել է «Արամ Խաչատրյանի երաժշտության միջազգային տարվա» բացմանը Մոսկվայում:

## Armenian Philharmonic Orchestra

The APO was founded in 1941 and was first conducted by the renowned Armenian musician Constantine Saradjev. Over the years, conductors M. Maluntsian, O. Durian, M.Terian, R. Vardanian, A.Katanian, D. Khandjian, V.Gergiev, V. Papian, M. Avetissian and L.Tjeknavorian directed the orchestra. In October 2000 Eduard Topchjan was appointed the Artistic Director and Principal Conductor of the APO. Since its foundation, the orchestra has performed most of the classical repertoire. Many of the world's leading artists such as D. Oistrach, S. Richter, M. Rostropovich have appeared with this orchestra. A. Melik-Pashayev, V. Ferrero, F.Konvichni, K. Masur and several other composers have conducted the orchestra. A. Khachaturian, D. Kabalevski and other composers have conducted their works with the accomapniment of the Armenian Philharmonic. Since 1989, the APO has toured extensively throughout the USA, Canada, Austria, France, Spain, the United Kingdom, Iran, UAE and other countries. The orchestra has released more than 30 CDs. During 2000-2001 season the APO, directed by E. Topchjan has had successful performances in Moscow and Berlin. On January 2003 the APO participated in the opening of the "Aram Khachaturian International Music Year" in Moscow.

## Լյուկ Բաղդասարյան

*դիրիժոր*

Ծնվել է Ժնևում: Որպես դիրիժոր ավարտել է Ժնևի Conservatoire Superieur de Musique, միաժամանակ արժանանալով առաջին մրցանակների՝ դաշնամուրի նվագի և կամերային երաժշտության ասպարեզներում: Դիրիժորության դասեր է առել Արփադ Գերեզից (Ժնև) և Կառլ Օստերրայխերից (Վիեննա):Շվեդ դիրիժորների մրցույթի (Բեռն) հաղթող է: Ճանաչվել է Ռումինիայի թիվ մեկ երիտասարդ դիրիժոր: Մաեստրո Կառլո Մարիա Ջուլինիի կողմից հաճախ հրավիրվում է Միլան և Ֆլորենցիա:

Ղեկավարվել է բազմաթիվ նվագախմբեր և երգչախմբեր, ինչպիսիք են Orchestre de la Suisse Romande (Շվեյցարիա), Philharmonia of Lasi (Ռումինիա), "Il Vocalisi" (Ֆլորենցիա), Ռադիոյի և հեռուստատեսության կամերային նվագախումբը (Բուխարեստ), Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը, Կոմիտասի անվան երգչախումբը (Հայաստան) և ուրիշներ:

## Luc Baghdassarian

*conductor*

Born in Geneva. As conductor he has graduated from the Geneva Conservatoire Superior de Musique.Simultane-ously he received various prizes for piano and chamber performances. He got conducting lessons from Arpad Gerecz (Geneva) and Carl Oesterreicher (Bern).

Luc Baghdassarian is a prize winner of the Swedish Conductors' competition. (Bern). He was hailed as the best Young Conductor of Romania. Baghdassarian is being frequently invited by Maestro Carlo Maria Giulini to Milan and Florence. He has conducted numerous orchestras and choirs, such as Orchestra de la Suisse Romande (Switzerland), Philharmonia of Lasi (Romania), "Il Vocalisti"(Florence), Chamber Orchestra of Bucharest Radio and TV, Armenian Philharmonic Orchestra, Komitas Choir (Armenia) and others.





## Ռուբեն Կոսեմյան, *ջութակ*

Ծնվել է 1973-ին Երևանում: Հինգ տարեկանից ջութակ է պարապել իր հոր՝ Ալեքսանդր Կոսեմյանի ղեկավարությամբ: 1987-ին մեկնել է Մոսկվա՝ կրթությունը շարունակելու պրոֆ. Մայա Գլեզարովայի մոտ: Նրա ուսուցիչների թվում է Երևանի կոնսերվատորիայի պրոֆեսոր՝ Է.Թադևոսյանը: Ռ.Կոսեմյանը 2000-ից դասավանդում է Երևանի կոնսերվատորիայում (ջութակ, կամերային անսամբլ): Ելույթներ է ունեցել Գերմանիայում, Ֆրանսիայում, Իրանում, ԱՄՆ-ում, Ռուսաստանում: ՀՊՖՆ-ի հետ հանդես է եկել Բրամսի ջութակի և թավջութակի կրկնակի կոնցերտի, Խաչատրյանի, Սարյանի, Չայկովսկու, Մոցարտի կոնցերտների կատարմամբ: Կատարել է ձայնագրություններ, այդ թվում՝ Ա.Բաբախանյանի հետ ձայնագրած Բեթհովենի «Կրոյցերյան սոնատը»: 2004-ին դարձել է Գերմանիայի «Denkmalschmiede Hofgen» մշակութային կենտրոնի ֆոնդի կրթաթոշակառու:

## Ruben Kosemian, *violin*

Born in 1973 in Yerevan. Since the age of 6 he studied violin under the guidance of his father Alexander Kosemian. In 1987 Ruben left for Moscow to continue musical education at the Moscow Conservatory with prof.Maya Glezarova. Among his teachers is the professor of Yerevan Conservatory Eduard Tadevosian. From 2000 Ruben Kosemian teaches at the Yerevan Conservatory (violin, chamber ensemble). He appeared with concerts in Germany, France, Iran, the US and Russia. With the Armenian Philharmonic Ruben Kosemian has performed the Brahms Double Concerto for Violin and Cello, Violin Concetos of Khachaturian, Sarian, Tchaikovsky and Mozart. Ruben has made recordings including Beethoven's "Kreutzer Sonata" with Armen Babakhanian. In 2004 Ruben Kosemian became the scholarship holder of the "Denkmalschmiede Hofgen" Cultural Center's Fund.

**Յո.Բրամս: «Ողբերգական նախերգանք», ռե մինոր, երկ 81 (1880թ.)**

Առաջին կատարումը՝ 1881, Բրեսլաու, դիրիժոր՝ հեղինակ: Այս գործի ստեղծումը կապված է Գյոթեի «Ֆաուստի» սպասվող (բայց չկայացած) բեմադրության հետ: Նախերգանքը Բրամսի հասուն ոճի արտահայտությունն է: Առանձնանում է իր հստակ համամասն ձևով, պաթետիկական և քնարական դրվագների հերթագայությամբ:

**Ա.Գլազունով: Ջութակի կոնցերտ, լա մինոր, երկ 82 (1904թ.)**
Առաջին կատարումը՝ 1905, Պետերբուրգ, մենակատար՝ Լեոպոլդ Աուեր, դիրիժոր՝ հեղինակ: Այս կոնցերտը ջութակի գրականության լավագույն գործերից է: Խախտելով եռամաս կոնցերտի ավանդույթը, Գլազունովն իր այս գործում դիմում է երկմաս կառույցին, որտեղ դանդաղ մասին հաջորդում է արագաշարժ ֆինալը (մասերը կատարվում են անընդմեջ՝ միավորված լինելով ջութակի կադենցիայով): Գլազունովի նվաճումներից է ճկուն, «անվերջանալի» զարգացում ունեցող երգային մեղեդին 1-ին մասում, ինչպես և ֆինալի կենցաղային տեսարանների շարանը, որտեղ լսելի են և որսորդական եղջերափողերի արձագանքը, և ռուսական ժողովրդական պարերի դարձվածքները:

**Յո.Բրամս: Սիմֆոնիա թիվ 2 («Հովվերգական»), ռե մաժոր, երկ 73 (1877թ.)**
Առաջին կատարումը՝ 1877, Վիեննա, դիրիժոր՝ Հ.Ռիխտեր: Ստեղծագործությունը գրվել է հեղինակի կյանքի երջանիկ օրերին, բնության գրկում, լեռնային լճի ափին: Այստեղից է սիմֆոնիայի կերպարների առանձնահատուկ ներշնչվածությունն ու բանաստեղծականությունը: 1-ին մասի վալսային դարձվածքները, 2-րդի լուսավոր երազանքներն ու խոհերը, 3-րդ մասի՝ հին Վիեննայի կերպարները հիշեցնող լենդլեր պարը հանգեցնում են կարնավալային տեսարաններ պարունակող ֆինալին: Ստեղծագործությունը հեռու է Բրամսի մյուս սիմֆոնիաներին հատուկ խտացված դրամատիզմից և պաթետիկայից: Ժամանակակիցներից մեկի դիպուկ արտահայտությամբ. «Դա հմայիչ և անմիջական ռոմանտիկական հովվերգություն է»:

**Ծրագիր / Program**

**Յոհաննես Բրամս**
**(1833-1897) Johannes Brahms**
Ողբերգական նախերգանք / Tragic Overture

**Ալեքսանդր Գլազունով**
**(1865-1936) Alexander Glazunov**
Կոնցերտ ջութակի և նվագախմբի համար
Violin Concerto
1.Moderato 2.Allegro

Մենակատար՝ **Ռուբեն Կոսեմյան**
Soloist: **Ruben Kosemian**

Ընդմիջում/ Intermission

**Յոհաննես Բրամս**
**(1833-1897) Johannes Brahms**
Սիմֆոնիա թիվ 2 / Symphony No.2
1.Allegro non troppo 2.Adagio non troppo
3.Allegretto grazioso (quasi andantino) 4.Allegro con spirito

Դիրիժոր՝ **Լյուկ Բաղդասարյան**
Conductor: **Luc Baghdassarian**

**Առաջիկա համերգը / The upcoming concert**
**Արամ Խաչատրյանի համերգասրահ** / **Aram Khachaturian Concert Hall**
**Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ**
**armenian philharmonic orchestra**

**20 / 04 / 04**

Մենակատար
**Իզաբել Բայրակդարյան**
*սոպրանո (Կանադա)*

Soloist
**Isabel Bayrakdarian**
*soprano (Canada)*

Դիրիժոր
**Էդուարդ Թոփչյան**

Conductor
**Eduard Topchjan**

Ծրագրում / Program
Արիաներ և նախերգանքներ օպերաներից
Opera arias and overtures

Yerevan Brandy Company

Բուրմունքի և հնչյունի ներդաշնակություն
Երևանի կոնյակի գործարան
Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ
**Harmony of Taste and Sound:**
Yerevan Brandy Company -
Armenian Philharmonic Orchestra

**Ինֆորմացիոն հովանավորներ**
**Publicity of this concert is provided by**

Մաշտոցի պողոտա 46 Mashtots Avenue
ՀՀ, Երևան 375002 Yerevan Armenia
Հեռ. /Tel: (+374 1)560645
Ֆաքս /Fax: (+374 1)564965
E-mail: apo@arminco.com
www.apo.am

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀ
ARAM KHACHATURIAN CONCERT HALL

# 16 Ապրիլի April 2004

**Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ**
Գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր
**Էդուարդ Թոփչյան**

**armenian philharmonic orchestra**
Artistic Director & Principal Conductor
**Eduard Topchjan**

Մենակատար
**Ռուբեն Կոսեմյան**
*ջութակ*

Soloist
**Ruben Kosemian**
*violin*

Դիրիժոր
**Լյուկ Բաղդասարյան**
*(Շվեյցարիա)*

Conductor
**Luc Baghdassarian**
*(Switzerland)*

**Համերգաշրջանի հովանավոր 2003/2004**
**Concert Season is sponsored by**

AGBU
**Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն**
**Armenian General Benevolent Union**